

յուլի շափ մեծութիւն ունի , բայց քիչ
մը աւելի թանձր և կարճ , իր մորթը
եօթը մարդ ծածկելու կը ծառայէ : Իր
կերպարանքը քան զգիունը աւելի փա-
փուկ և խիտ բաշով զարդարուած է ,
որն որ մութ կարմիր է և մինչև աչուր-
ները կ'իջնայ : Իսկ մարմնոյն մնացած
մազերը խարտեաշ են , և վրան ամե-
նեին ոչ սե և ոչ կարմիր գոյն կայ : Ո-
տուրները թաւամազ է և երկշիղ : Ո-
կուները և ներքին մասերը բոլորովին
կովին նման են „ : Ո'ինչև հոս ստորա-
գրածը օռոքին կը յարմարի , բայց ան-
կէց վերջինները քիչ մը երկբայութեան
մէջ ձգեցին զբնապատումները . “ Իր
եղջիւրները պատերազմելու չեն ծա-
ռայեր , որովհետեւ ծայրերնին դէպ 'ի
ներս ոլորած է , որ իրեւ մէկ բոլորակ
մը կը ձևացընեն „ : Ո'երեւայ թէ հոս
լրիստոտէլ մէկ անհատ կենդանւոյն
վրայ դիտած մասնաւոր հանգամանքը
ամբողջ տեսակին կու տայ . ինչպէս օ-
ռոքի մը կմասիքը ինչուան հիմա կը պա-
հուի բնական պատմութեան թանգա-
րանի մը մէջ , որուն մէկ եղջիւրը ա-
սանկ ծռած է :

ՀԱ.ՓԱ.ԿԱ.Ն ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՉԵՓԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ցանկութիւն դրաբան շափուց ու կշոց :

Լրբոր ինչ և իցէ բանի մը մեծ է կամ
պղտիկ է կ'ըսենք , չէ թէ մեր զգայու-
թեանցը վրայ ըստ ինքեան մեծ կամ
պղտիկ կը տապաւորուի այն բանը , հա-
պա միշտ ուրիշ բանի հետ բաղդատելով
կ'ըսենք : Ուրեմն երբոր մեծութիւն կամ
պղտիկութիւն կ'ըսենք՝ միշտ բաղդա-
տելով կ'ըսենք , չէ նէ 'ի բնէ անորոշ են :
Ինչպէս օրինակի համար , դոյլ մը ջուրը
շատ պղտիկ բան է՝ թէ որ ծովուն ջրոյն
հետ բաղդատելու ըլլանք . բայց նոյն
դոյլ մը ջուրը շատ մեծ բան կ'ըլլայ՝ թէ
որ կաթիլ մը ջրոյն հետ բաղդատելու
ըլլանք : Ինութե՛ մէջ բացարձակ ոչ մե-

ծութիւն ըլլալով և ոչ պղտիկութիւն , այլ
և այլ մեծութեց իրարու հետ ունեցած
ընդհանուր համեմատութիւնները կեր-
պով մը հաստատելու համար պէտք է
որ բաղդատութեամբ ըլլուի : Կ'որ հա-
մար այլ և այլ մեծութեանց իւրաքան-
չիւր տեսակին մէջէն հաստատուն մե-
ծութիւն մը կ'ընտրուի , որուն չափը
ըստ կամ կրնայ ըլլալ , և անոր վրայ
կ'առնուի ուրիշ ամէն մեծութիւնները՝
իւրաքանչիւրն իրեն տեսակին : Ո'յս
ըստ կամ ընտրուած մեծութիւնը , ո-
րով կ'իմացուի թէ ուրիշ մեծութիւն
մը իրմէ որչափ մեծ է կամ պղտիկ , կ'ը-
սուի լադ :

(Օրինակի համար , բաղդաքէ մը ու-
րիշքաղաք երթալու ձամբուն երկայնու-
թիւը չափելու համար , պէտք է ըստ կամ
որոշուած երկայնութիւն մը առնուլ և
այնչափ անգամ հետզհետէ այն ձամ-
բուն վրայ դնելը ըշափ անգամ որ կրնայ ա-
նոր մէջ բովանդակուիլ , և անգամներուն
այս թիւը ձամբուն երկայնութիւնը կը
ցուցընէ : Ո'յսպէս ալ ծանրութեան մը
մեծութիւնն իմանալու համար , ծան-
րութիւն չափելու որոշուած մեծութիւն
մը պէտք է հետզհետէ այնչափ անգամ
առնուլ՝ որչափ անգամ որ կրնայ բովան-
դակուիլ առաջնոյն մէջ , և այս անգամ
ները կամ չափերը պէտք է որ հաստա-
տուն և անփոփոխ ըլլան , և չափելի մե-
ծութեանց տեսակին . և հետեւաբար
պէտք է երկայնութիւն ըլլայ՝ թէ որ եր-
կայնութիւն մը չափել կ'ուզենք , ծան-
րութիւն՝ թէ որ ծանրութեան մը մե-
ծութիւնը գիտնալ կ'ուզենք . և չկայ
մէկը որ ուզենայ երկայնութիւն մը ծան-
րութեամբ չափել , կամ ծանրութիւն
մը երկայնութեամբ , և կամ և այլն :
Ո'յսլ և այլ տեսակ չափերը կընանք
եօթնի վերածել . և են

Չափք Երկայնութեան և Հեռաւորութեան .
 „ **Երկերեւութի .**
 „ **Տարածոցի .**
 „ **Լըոյ .**
 „ **Դրամոց .**
 „ **Նկեանց .**
 „ **Ճամանակի .**

Այս եօթը այլ և այլ տեսակ չափուց իւրաքանչիւրն ալ հարկաւորապէս իրեն ստորաբաժանմունքները պէտք է որ ունենայ՝ գործածութեց դիւրութեց համար : Այսպէս առաջինէն սկսեալ, այսինքն երկայնութեան չափէն, սովորական գործածութեանց մէջ հարկ կ'ըլլայ այսպիսի երկայնութիւններ չափել, որ մէկմէկէ շատ տարբեր են . ինչպէս մանրադիտակային ամենապզտիկ արարածոց մեծութէն սկսեալ ինչուան երկնից անդնդոց խորերը պտրտող լուսաւորաց հեռաւորութիւնները հարկ կ'ըլլայ չափել : Ո՞եծ անմատութիւն կ'ըլլայ թէ որ մի և նոյն չափով ուզէինք այսպիսի անհամեմատ մեծութիւններ չափել . վասն զի այն չափը՝ կամ մանր մեծութիւնները չափելու յարմար կու գայ, այն ժամանակը մեծամեծ մեծութիւնները հարկ կ'ըլլայ բազմաթիւ թուանշաններով բացատրել, որ գժուարագործադրելի են, մանաւանդ թէ միտք չեն պահուիր . և կամ թէ մեծամեծ երկայնութիւններ չափելու յարմար կու գայ, այն ժամանակն ալ պզտի երկայնութիւնները կամ հեռաւորութիւնները պէտք կ'ըլլայ բազմաթուանշան անուանիչ ունեցող կոտորակներով բացատրել : Այս պատճառաւաւ չափուց ամենայն դրութեանց մէջ երկայնութեան այլ և այլ չափեր սահմանեալ են . ինչպէս մղն, կանգուն, և այն :

Երկրորդ կարգի չափերը, այսինքն մակերեւութի չափերն ալ նոյնպէս այլ և այլ մեծութեամբ են . և մասնաւոր չափ կայ որոշուած ընդարձակ գաւառներ չափելու . մասնաւոր չափ՝ դաշտաց, արտորէից համար, և այն . մասնաւոր չափ՝ տանց, սենեկաց, տախտակաց համար, և այն :

Տարածոյի չափերն ալ բնականապէս երկուք կը բաժնուին . մէյ մը ընդունա. կութեան չոր բաներու համար, ինչպէս են յարդ, ցորեն, գարի, և այն, և հեղանիւթոց . մէյ մըն ալ խորանարդ չափեր՝ հող, աւազ, պատ և ասոնց նման բաներ չափելու համար :

Կըոց չափերն ալ պէտք է որ համեմատ ըլլան մեծամեծ ծանրութեանց, ինչպէս են նաւու և կառաց բեռները . միջակ և պզտի ծանրութեանց . թան, կագին բաներու ծանրութեանց և բժը կական նիւթոց ծանրութեանց :

Դրամը կը ծառայէ երբեմն թան, կագին բաներ գնելու և երբեմն թե թեագին բաներ գնելու . ուստի անկարելի կ'ըլլար այս վերջիններս առաջիններուն արժէիցը համեմատ կտրուած դրամով գնել . և գժուարին՝ առաջինները վերջիններուն արժէիցը համեմատ կտրած սակաւ ագին դրամներով գնել . վասն զի պէտք կ'ըլլայ այն ժամանակը ասոնցմէ շատ համրել . անոր համար հարկ է որ զանազան գնով դրամներ ըլլան :

Նկեանց չափերը տարբեր բազմապատիկներ, կամ ստորաբաժանմունքներ և կամ տեսակներ չեն կիսար ունենալ:

Ճամանակի չափն ալ կը բաժնուի դար, տարի, ամիս, եօթնեակ, օր, ժամ, և այն :

Չափուց ու կըոց մէկ աղէկ դրութիւն մը պէտք է ուրեմն այս ամէն զանազանութիւններն ունենայ, և այնչափ լաւագոյն կը սեպուի՝ որչափ որ այս այլ և այլ միութիւնները պարզ ըլլան, անփոփոխելի, և չէ թէ միայն մէկ պարզ ու մեկին վերաբերութիւն մը ունենան իրարու հետ, այլ նաև ուրիշ ազգաց չափուցն ու կըոց դրութեանցը հէտ ալ յարմարին :

Իսինք թէ չափուց ու կըոց միութիւնները պէտք է որ նախ պարզ ըլլան . ոչ միայն նկատմամբ իրենց բացարձակ մեծութեանը, այլ նաև նկատմամբ իրենց ձեռյն : Արենց բացարձակ մեծութիւնը այն չափ աւելի պարզ կ'ըլլայ, որ

ափ աւելի չափելի առարկայից մեծութեանը համեմատ գայ , և իրենց ձևն սղիւրատար ըլլայ ինչ բաներու համար դորոշուած են : Ինչպէս , օրինակի հանար , հեղանիւթոց ընդունակութեան ափերը անյարմար կ'ըլլային՝ թէ որ նոյն են ու նոյն չափն ունենային արմուեաց նդունակութեան չափերու հետ : Այս պէս նաև դրամներն ալ շատ անյարմար լու գային գործածութեան՝ թէ որ գլանածե ըլլային . ինչպէս են բոլոր քաղաքականացեալ ազգաց դրամները :

Երկրորդ պայմանն որ ըսկնք չափուց ու կշռոց գրութեան մը լաւութեանը համար , այն է որ այլ և այլ միութիւնները անփոփոխելի ըլլան : Վսիկայ ամենահարկաւոր պայման մըն է , որուն առաջինները շատ միտք չդրին . և այս անհոգութենէս գլխաւորապէս կը ծագի ազգաց չափուց ու կշռոց այն խառնակութիւնը , որուն անհնարին է դարման մը տանիլ : Չափուց ու կշռոց անայլայակ պահպանութիւնը գլխաւորեր կու բանէ կը կախուի . մէյ մը նոյն չափերն որոշել կամ հաստատել . մէյ մըն ալ անոնց կաղպարները շինել և աղէկ պահպանէլ զանոնք : Վյու երկրորդ պայմանիս հարկաւորութիւնը գրեթէ հիմայ ամենայն քաղաքականացեալ ազգք և աղինք ճանցեր են , և ամէն տեղ մասնաւոր օրէնքներ կան այս նախոսդաղափարները կամ կաղպարները զգուշութեամք պահպանելու , և պէտք եղած ատենը ընկերութեան մէջ գործածուած չափերն ու կշիռները ստուգելու : Իսյու այս նախագաղափարներս ինչնիւթէ ալ շինուին՝ անկարելի է անարատ պահել զանոնք յաւիտեանս . վասն զի այս աշխարհիս վրայ ամէն բան ապականութեան անտնօրինելի օրինաց տակն ինկած են . ուստի որչափ ալ զգուշանան մարդիկ այս կաղպարներուն պահպանութեանը՝ անկարելի է որ մինչև վերջը անարատ մնան և պղտի փոփոխութիւն մին ալ չկրեն , որ ժամանակաւ զգալի կ'ըլլայ , և ալ յոյս չմնար դարման տանելու՝ թէ որ առաջուցմէ ասոնք անփոփոխելի չափու մը վրայ հաստատուած

ըլլան , որ բնութեան մէջ գտուի : և պէտք եղած ատենը կարելի ըլլայ գըտնելու զանիկայ :

Վյու բանիս համար և գլխաւոր չափերը առձեռն պատրաստ ունենալու համար՝ մարդիկ ՚ի սկզբանէ իրենց մարմնոյն անդամները կամ մեծութիւնները չափուց միութիւն առին . ինչպէս որ կը ցուցընեն , մատն , բուն , երկ , բաղակ , գլուխ , ոտն , ուոյլ , մարդաշատ , և այլն բաւերը . բայց ինչպէս որ ամէն մարդու այս անդամները կամ մեծութիւնները մէկունը մէկալինին հաւասար չէ , այս պէս ալ իւրաքանչիւր ազգաց չափերը մէկմէկէ կը տարբերէին , որով անկարելի էր ամէն տեղ հաւասար չափ մը ունենալ : Վյու պիսի խախուտ սկզբանց վրայ հաստատուած չափերէն ծագած շփոթութիւնը անոնց կաղպարներուն հարկաւորութիւնը ցրցուց , որոնք թե պէտե ոչ բազկի , ոչ ոտից , և այն մեծութիւնը պահեցին , սակայն անունները կրեցին շատ ազգաց մէջ . բայց ժամանակաւ այս կաղպարներն ալ փոփոխելով կամ կորսուելով՝ անհնարին եղաւ անոնց չափն ստուգել :

Իսկ ազգաց հիմակուան չափուց ու կշռոց իւրաքանչիւր զրութեանը միտք գնելով՝ կը տեսնենք որ շատ անկանոն են , և անոնց մասունքը ամեննեին վերաբերութիւն մը չունին իւրաքանչիւր իրենց ամբողջին հետ . բոլորն ալ բատ կամ ընտրուած մեծութիւններ են , և անոնց իւրաքանչիւրին բազմապատիկ ները և ստորաբաժանմունքներն բատ համույս որոշուած են և ամեննեին հաստատուն օրէնք մը չունին : Վէկ տեսակի մը միութեանց հետ ամեննեին վերաբերութիւն չունին , և բատ իւրաքանչիւր տեղեաց ասոնց անուններն ու չափերը կը տարբերէին . և շատ անդամ բոլորովին իրարմէ տարբեր տեսակի միութիւններ մի և նոյն անունն ունին :

Իւրաքանչիւր ազգ , մանաւանդ թէ ամէն քաղաք , ինչուան գեղեր , իրենց համար չափուց ու կշռոց մասնաւոր զրութիւն ունին :

Այս անյարմարութեանցս առջեւն առնել ուզելով ուսումնականք անցեալ դարուն վերջերը՝ գլխաւոր իրեք բան դիտեցին ,

Դախ թէ երկայնութեան այնպիսի չափ մը որոշել , որ մէկալ մնացած չափերն իրմէ ծագին , և թէ այնպիսի կարգաւ՝ որ իրեն հիմն ըլլայ նոյն այն չափը կամ միութիւնը :

Երկրորդ նայեցան որ անոնց կոտորակները կամ բաժանմունքները անփոփոխ տասնորդական կարգաւ յառաջատին ամբողջական թուոց պէս , որպէս զի անոնց հաշիւը միակերպ , պարզ և ամենուն դիւրահասկանալի ըլլայ :

Երրորդ և ամենեն գլխաւոր՝ նայեցան որ չափուց այս հիման անփոփոխնելի օրինակը բնութեան մէջ փնտրուեն , որ ժամանակաւ ոչ կորսուի և ոչ փոփոխութեան ենթակայ ըլլայ :

Ի՞ս բանիս համար ամէն առաջարկուած միջոցներէն այս երկուքը միայն ընդունելութիւն գտան . այսինքն .

Ա . Արեգակնային միջին ժամանակին մանրերկրորդները զարնող ծօձանակին երկայնութիւնը չափուց միութիւն առնուլ :

Բ . Ո՞իջօրէական շրջանակին աղեղան մը կամ մասի մը երկայնութիւնը չափուց միութիւն առնուլ :

Ծէպէտե առաջին մոտածութիւնը գեղեցիկ է , բայց բաւականապէս ծիշդ չէ . վասն զի թէ որ երկիրս կատարեալ գունտ մը ըլլար և թէ 'ի դադարման , իրեն չափերը մակերեսութիւն ամէն կողմերը հաւասար կ'ըլլային . բայց երկիրս տափկած գնտածե մըն է , որուն հասարակածային տրամադիծը աւելի երկայն է քան զիւր առանցքը կամ քան զբեռային տրամագիծը , որով ծանրութիւնը իրեն ծայրագոյն աստիճանը կը հասնի բեւեռներուն տակ , և երթալով կը նուազի դէպ 'ի հասարակած . հետեւ բար ծօձանակին ալ իրեն ծօձմունքները բեւեռներուն տակ կ'երագէ և դէպ 'ի հասարակած կը դանդաղէ :

Աստի ուզելով ժամանակի հաւասար

մասունքը չափել պէտք է հասարակածէն սկսեալ դէպ 'ի բեւեռ աստիճանաբար հետզհետէ ծօձանակին երկնցընել : Երկրիս վրայ մարմնոց ծանրութիւնը կեղրունախոյս զօրութեան ազդեցութեան տակն ալ կ'իյնայ , որ բեւեռին տակը ու չինչ է , բայց դէպ 'ի հասարակած երթալով կ'ածի , ուր իր ծայրագոյն աստիճանը կը համնի : Ծէկէց կը հետեւի որ մարմինք բեւեռէն հեռանալով՝ իրենց ծանրութիւնն ալ կը տարբերի . որով չենք կրնար ըսել բացարձակապէս թէ մանրերկրորդ զարնող ծօձանակին երկայնութիւնը հաստատուն է :

Եւ երկրորդ անգամ , յիրաւի այս երկայնութիւնս իւրաքանչիւր տեղ հաստատուն է , և տեղէ մը ուրիշ տեղ ունեցած տարբերութեան օրէնքն ալ կը գիտցուի , և հետեւաբար կրնար չափուց ու կշռոց դրութեանն աղէկ գաղափար մը ըլլալ , բայց փորձը ցուցըներ է որ մի և նոյն զուգահեռականին տակ , և մի և նոյն բարձրութեան մէջն ալ ծօձանակին երկայնութիւնը կը փոփոխի . և այս անհաւասարութիւնս պէտք է որ ըլլայ , վասն զի երկրիս զանգուածին նոյնակեզրոն խաւերը համասեռ չեն . բաց 'ի ասկէց երկրաբանական այն մեծամեծ յեղափոխութիւնները , որ երկրիս ընդերացը մէջ կը պատահին և սկիզբնին զգիտցուիր , կրնան ժամանակաւ փոփոխութիւններկրորդ զարնող ծօձանակին երկայնութիւնը , որով այս նախագաղափարս փոփոխութեան ենթակայ ըլլալով՝ չկրնար չափուց ու կշռոց դրութեանը անփոփոխնելի հիմն ըլլալ :

Ի՞ս առաջին միջոցը իրաւ դիւրագործադրելի է . բայց այս անյարմարութիւնս ալ ունի , որ պէտք է երկայնութեան չափը երկու այնպիսի տարերաց . մէ կախմունք ունենայ , որ բոլորովին իրմէ տարասեռ բաներ են . ինչպէս են ժամանակին ու ծանրութիւնը , որոնց բաժանմունքը իրաւ ըստ կամն է , սակայն ժամանակին վաթմուրդական բաժանումը չէր կրնար ընդունելի ըլլալ իբր հիմն չափուց և կշռոց տասնորդական գրանուլութեան :

Աւստի երկրորդ միջոցը ընդունելու-
թիւն գտաւ . որ է միջօրէական շրջա-
նակին աղեղան մը կամ մասի մը երկայ-
նութիւնը չափուց միութիւն առնուլ :

Ո՞արդուս աւելի բնական է իրեն
տեղէ մը ուրիշ տեղ փոխադրութեան
չափը իր բնակած հողագնտոյն մեծու-
թեանը վերբերել . այնպէս որ կտրած
միջոցին երկայնութեանը լրկ անունը
տալով գիտնայ այս միջոցիս վերաբե-
րութիւնը երկրիս ամբողջ շրջանա-
կին երկայնութեանը հետ : Ի՞ս բա-
նիս հասնելու համար գաղղիացի ե-
րևելի երկրաշափք ամենայն ձգու-
թեամբ երկրագնտոյս միջօրեական մէկ
աղեղ մը չափեցին , և անէէ հետևեցու-
ցին նոյն միջօրեին շրջանակին բոլորա-
կան երկայնութիւնը : Ի՞ս երկայնու-
թիւնը քառասուն միլիոն հաւասար մա-
սունք բաժնեցին . այս մասերէն մէկը ,
որ ոչ շատ մեծ է և ոչ շատ պղտիկ , եր-
կայնութեան չափու միութիւն առին ,
ու զանիկայ յունական բառով ներ կո-
չեցին , որ չափ ըսել է . և իրմով շինուած
ուրիշ չափերն ու կշիռքները անուանե-
ցին ներբահան դրաւելու :

Արեմն մեղին է երկրիս միջօրեին
քառասուն միլիոներորդ մասը, կամ թէ
միջօրեական շրջանսակին քառորդին տա-
սը միլիոներորդ մասը :

Բնեւուէն դէպ 'ի հասարակած եղած
աղեղը կամ միջօրէին քառորդին երկայ-
նութիւնն է ձիչը 5,130,740 ձողաչափ
Բարիզու , որ ոտնաչափի վերածելով՝
տուեալ 6 ոտք առ իւրաքանչիւր ձողա-
չափ , կ'ընէ 30,784,440 ոտնաչափ . այս
ոոքերն ալ բթաչափի վերածելով՝
տուեալ առ իւրաքանչիւր ոտք 12 բթա-
չափ , կ'ընեն 369,413,280 բթաչափ . ո-
րոնք գծաչափի վերածելով՝ տուեալ 12
գիծ առ իւրաքանչիւր բթաչափ , բևե-
ռէն դէպ 'ի հասարակած եղած աղեղը
կամ թէ երկրիս միջօրէին քառորդին
երկայնութիւնը կ'ըլլայ 4,432,959,360
գծաչափ :

Վհաւասիկ այս է նոր չափուց ու
կշռոց հիմն և հաստատութիւնը . և
մեղքն է այս երկայնութեանս տասը

միլիոներորդ մասը . այսինքն 443 գծա-
շափ և 2959360 տասն միլիոներորդը
գծաչափի . և որովհետեւ ըսինք թէ,
Բարիզու ոտքը 12 բթաչափ կը բաժ-
նուի , բթաչափն ալ 12 գծաչափ , ուս-
տի մեղրին երկայնութիւնը կ'ըլլայ 3
ոտք , 0 բութ , 11 զիծ և 2959360
տասն միլիոներորդը գծի : Բայց մեղրին
բացատրութեանը մէջ այս բազմաթիւ
տասնորդականները չմոցընելու հա-
մար՝ որոշուած է որ առաջին երեքը
միայն պահուին , մնացած չորս տասնոր-
դականները դուրս ձգուին . որով մե-
ղրին երկայնութիւնը կ'ըլլայ մերձաւո-
րաթար 443 գծաչ . 296 հազարորդը
գծաչափի . և կամ 3 ոտք , 0 բութ , 11
զծ . 296 հազարորդը , որ ճշմարիտ եր-
կայնութենէն քիչ մը մեծ է :

(ՊԻՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ)

ՏԵՇԱՐՄԱՆ

የኢትዮ-ካናንጂ-ርር እያነ-ርር ይ-ገኘኝ- የፌርማ

Կողմանը գետահինձորը եփ ջրոյ մէջ ընկպմէ
երկու իրերք վայրկեան . և տբը տարածէ փսխածի
վրայ , արեւուն մէջը չորցուր ու ցորեննոցի մէջ
պահէ : Առանք գարնան չեն ծլիր , չեն մըլոտիր , և
որչափ ասեն ուզես կը պահուին՝ առանց համեր-
նին կորսնդսնելու :

Առեղողին ըստ այս պահի կամաց է, և
ու առաջարկութիւն առ այս գույնու, և
կամաց է:

Աղեկ հասունցած ստեպին ան քանի որ չե
կոշտացած , ու մաքրէ . եաբը գերձանի վրայ առ
ցինելով՝ քառորդի մը չափ եռացեալ ջուրի մեջ
դիր . անկեց վերջը սաստիկ յուրա ջուրի մեջ պա-
զեցուր , ու աղեկ մը քամելով չորցուր ճերմակ կը-
տաւի մեջ . եաբը կտոր կտոր կտրտէ ու սապա-
տով փռան մեջ դիր՝ քանի որ հացը անկեց նոր հա-
նուած է , ան կերպով որ սովորաբար պատւղներ
չօրդինելու համար կը գործածուի :

Այս կերպով թարց լուրիսն ալ կընաս չորք-նել, բայց պէտք է որ փառն ապօռթիւնը շատ չսփառեալ լլիւ :